ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո ւ Մ

«12» 11 2013թ. Թիվ 59-Ն

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐՔՍԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 22 Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 68,0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐ/ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, և ,,Հրապարակային սակարկությունների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքներով, հիմք ընդունելով Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու՝ ,,Քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի օտարման /վարձակալության տալու/ կարգը հաստատելու մասին 21.02.2006թ. թիվ 1/8 որոշումը և ,,Անիկոմ,, ՍՊԸ-ի կողմից Մարքսի փողոցի թիվ 22 բ հասցեում գտնվող շինությունների /ավտոտնակների/ շուկայական արժեքի գնահատման եզրակացությունը /լիցենզիա ԱԳ թիվ 0249, տրված 08.11.2012թ., գործունեության ժամկետը՝ անժամկետ/:

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարելու քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Մարքսի փողոցի թիվ 22 բ հասցեում գտնվող շինությունները /ավտոտնակները/:
2. Քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Մարքսի փողոցի թիվ 22 բ հասցեում գտնվող շինությունների /ավտոտնակրների/ աճուրդային կարգով օտարման մեկնարկային գին սահմանել 1300000 /մեկ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Աճուրդն անցկացնել բաց, դասական եղանակով:
4. Ուժը կորցրած ճանաչել Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու 12.10.2006թ. թիվ 8/15 և 26.12.2007թ. թիվ 10/12 որոշումները:

Ավետիսյան Հերմոն	Դերձակյան Արման
Թադևոսյան Արման	Հայրապետյան Ռուզան
Հովհաննիսյան Վազգեն	Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ	Պողոսյան Գաբրիել

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆ